ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
17.04.2023 թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/50
գնման պայմանագրի

ք. Երևան «03» «04» 2024թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ղազարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև կողմեր), ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 17.04.2023 թվականին կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/50 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության 15.03.2024 թվականի թիվ Ն/14425-24 և 26.03.2024 թվականի թիվ Ն/16448-24 գրությունները կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

1.Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված «Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ի և Մանկապատանեկան ստեղծագործական քաղաքային կենտրոնի տարածքների հիմնանորոգման աշխատանքների համար 2024 թվականի կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 297767000 (երկու հարյուր իննսունյոթ միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Պայմանագրով նախատեսված իրականացվելիք աշխատանքների գնի մնացած գումարի մասով՝ 511754876 (հինգ հարյուր տասնմեկ միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն վճարումը կիրականացվեն այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

1.3 Հաստատել սույն համաձայնագրի 2024 թվականի վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված թիվ 1-ի:

1.4 Հաստատել սույն համաձայնագրի 2024 թվականին կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկը՝ համաձայն հավելված թիվ 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրը կազմված են 3 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ՀՀ ՇՄ Գյումրի Կորի 33 փ. 11 տուն
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ
գործառնական վարչություն	Հ/Հ 2050122205831002
ՀՀ 900012001237	ՀՎՀՀ 05543213
ՀՎՀՀ 02593108	
Վ.Պապիկյան ----------	Ա.Ղազարյան----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված թիվ 1
17.04.2023թ. կնքված թիվ ԵՔ- ԲՄԱՇՁԲ-23/50 պայմանագրի
«03» «04» 2024 թ. կնքված թիվ 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հր ավերովնա խատես-վածչափաբ աժնիհամա ր	Գնում ներիպլանովն ախատեսվածմ իջանցիկծածկ ագիրը՝ ըստԳՄԱդաս ակարգման (CPV)	Գնմանենթակ ածառայությունների անվանումը	Աշխատանքների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդթվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611200/1	«Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ի և Մանկապատանեկան ստեղծագործական քաղաքային կենտրոնի տարածքների հիմնանորոգման աշխատանքներ	.....	.....	.....	140000000	140000000	140000000	200000000	200000000	200000000	297767000	297767000	297767000	297767000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900012001237
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ
ՀՀ ՇՄ Գյումրի Կորի 33 փ. 11 տուն
«Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ
Հ/Հ 2050122205831002
ՀՎՀՀ 05543213

Ա.Ղազարյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
17.04.2023թ. կնքված թիվ ԵՔ- ԲՄԱՇՁԲ-23/50 պայմանագրի
«03» « 04 » 2024 թ. կնքված թիվ 2 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏԱՆԻ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ԹԱՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի ԵՎ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

No	Կապալառուիկողմիցկատարվելիք աշխատանքներիանվանումներ	Աշխատանքներիկատարմանժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	«Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ի և Մանկապատանեկան ստեղծագործական քաղաքային կենտրոնի տարածքների հիմնանորոգման աշխատանքները	Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերը ուժի մեջ մտնելու օրը	150-րդ օրացուցային օրը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900012001237
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ
ՀՀ ՇՄ Գյումրի Կորի 33 փ. 11 տուն
«Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ
Հ/Հ 2050122205831002
ՀՎՀՀ 05543213

Ա.Ղազարյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԻՆԵԿՈԲԱՆԿ

28.03.2024 № 62134

ԵՐԱՇԽԻՔ N EA24/00250
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/50** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում ԿԻՐ-ՔԱՐ ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից 17/04/2023թ. կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/50 պայմանագրով և կնքվելիք Համաձայնագիր N 2-ով /այսուհետ միասին՝ Պայմանագիր/ նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **90,243,481.00 (իննսուն միլիոն երկու հարյուր քառասուներեք հազար չորս հարյուր ութսունմեկ) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կամ բենեֆիցիարի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900015211429** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է մինչև 06/04/2027թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի **vachagan.mejunc@yerevan.am** էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք.Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/50 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ
<<ԳՅՈՒՄՐԻ>> Մ/Ճ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆ

Կատարող՝ Կարինե Ավեդիսյան
Ստորաբաժանում՝ ՎՀԲ
Հեռ.՝ +374 10 510510 (5945)

ԻՆԵԿՈԲԱՆԿ

28.03.2024 № 62135

ԵՐԱՇԽԻՔ N EA24/00251
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և ԿԻՐ-ՔԱՐ ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 17/04/2023թ. կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/50 պայմանագրից և կնքվելիք Համաձայնագիր N 2-ից /այսուհետ միասին՝ Պայմանագիր/ բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **30,078,161.00 (երեսուն միլիոն յոթանասունութ հազար հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900015211429** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է մինչև 06/04/2028թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի **vachagan.mejunc@yerevan.am** էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք.Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/50 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ
<<ԳՅՈՒՄՐԻ>> Մ/Ճ ԿԱՌԱՎԱՐԻՉ **ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆ**

Կատարող՝ Կարինե Ավետիսյան
Ստորաբաժանում՝ ՎՀԲ
Հեռ.՝ +374 10 510510 (5945)